ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անուն, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը
   Նարեկ Տերյան, ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ
2. Գործուղման վայրը և ժամկետները.
   Մոսկվա (Ռուսաստանի Դաշնություն), 2023 թվականի ապրիլի 3-5-ը
3. Հրավիրող կողմը՝
   Ռուսաստանի Դաշնությունում Հայաստանի Հանրապետության դեսպանություն
4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝
   2023 թվականի ապրիլի 4-ին Ռուսաստանի Մոսկվա քաղաքում անցկացվող՝ «Ներդրումներ Հայաստանում. «բաց դռների» քաղաքականություն» խորագիրը կրող հայ-ռուսական գործարար համաժողովին մասնակցություն:
5. Քննարկված թեմաները
   - Բարենպաստ ներդրումային միջավայր
   - Համագործակցության վեկտորներ
6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.
   Հայկական պատվիրակության կազմում մասնակցել եմ լիագումար նիստին:
   Համաժողովին մասնակցող ռուսաստանյան գործարար շրջանակներին ներկայացրել եմ Հայաստանի ներդրումային միջավայրը, ներդրումային հնարավորություններն ու պետական աջակցության գործիքակազմը:
   Իմ կողմից ներկայացվել են նաև ներդրումային բնագավառում ՀՀ կառարության ծրագրերը, Հայաստանում ներդրումներ կատարելու առավելությունները: Լուսաբանել եմ ներդրումային ծրագրերի իրականացման հաջողված փորձը:
   Կայացած պանելային քննարկումներին (հանդիսանալով որպես խոսնակ) մտքեր ենք փոխանակել ինչպես ԵԱՏՄ շրջանակներում ինտեգրացիոն գործընթացներին հնարավորությունների մասին, այնպես էլ՝ երկկողմյա ձևաչափով համագործակցության խորացման համար առկա ներուժի բացահայտման ուղղությամբ:
   Հանդիպումներ եմ ունեցել Ռուսաստանի Դաշնության պետական մարմինների և գործարար շրջանակների ներկայացուցիչների, ինչպես նաև պոտենցիալ ներդրողների հետ:
7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.
   Արդյունքում՝
   - Պայմանավորվածություն է ձեռք բերվել շարունակական դարձնել շփումները ՌԴ շահագրգիռ պետական մարմինների և բիզնեսի ներկայացուցիչների հետ,
   - Հանդիպումների ընթացքում ռուսական կողմին հետաքրքրող հարցերը կպարզբանվեն ՀՀ էկոնոմիկայի նախարարության և Հայաստանում բիզնեսին աջակցող կառույցների կողմից:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Շփումները բիզնեսի և պետական մարմինների ներկայացուցիչների հետ կիրականացվեն անընդհատ եղանակով, աշխատանքային քննարկումների և գրությունների միջոցով:

Ակնկալվող արդյունքներ՝

Ներդրումների ներգրավում, կոոպերացիոն կապերի զարգացում:

9. Ստորագրությունը, ամսաթիվը.

Նարեկ Տերյան
09.04.2023թ.